

Ա. Ա. ԱՆԱՆՅԱՆ

ԾՆԵԱԵԿԱՅԻՆ ՀՈՐԻՆ  
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՎՐ  
ԿՈՆՍԵՐՎԴ ԶՈՆԱՅՈՒՄ



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՈՒԻ ՄԱՆԴԱՐԴՔՈՂԿՈՄԱՏԻ ԱՅՋԵԳՏՎԱԲՈՒԺԱ-  
ԿԱՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՍԵԼԵԿՑԻՈՆ ԿԱՅԱՆ

ԳՐԱՏԱԿԱՆ ՍԵՐԻԱ ՀԵ 2

635.659 (47.925)

Ա - 55

Ա. Ա. ԱՆԴՐԱՍՅԱՆ

ԱՏՈՒԳՎԱՆ Է 1961 թ.

ԾՆԵԲԵԿԱՅԻՆ ԼՈԲԻՆ  
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՈՒ  
ԿՈՆՍԵՐՎԻԴ ԶՈՆԱՅՈՒՄ

4738

4  
18925



ՀԱՅԿԱԿԱՆ  
1964 2

## ԽՄՐԱՎԴՐՈՒՅԹՆ, ԿՈԼԵՎԱՒԹ.

- Ն. Ն. ԳՐՈՒՏՈՍԵՐԴԻՎ.—բիոլոգ. գիտ. դոկտոր  
Մ. Հ. ՄԱԼԻԱՍՑԱՆ—գյուղաց. գիտ. թեկ. դոցենս  
Վ. Ա. ՄԱՑԱԴՅԱՆ—ավագ գիտ. աշխատող

Հեղինանուր խմբագրությամբ—զյուղացնե. գիտ. դոկտոր, պրօֆ. Մ. Գ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ  
Պատ. խմբագիր—զյուղացնե. գիտ. թեկ. դոցենս Մ. Հ. ՄԱԼԻԱՍՑԱՆ

Ա. Ա. ԱՆԱНՅԻՆ  
Спаржевая фасоль  
в консервной зоне  
Армянской ССР  
(на армянском языке)  
Армгиз 1942 Ереван

Կոնսերվի գործարանին բանջարեղենի հումք հանձնելու գրաֆիկը կանոնավորելու և ամբողջ սեզոնի ընթացքում այդ գործարանը համաշափ և անընդհատ բեռնավորելու համար ներկայումս արտադրության մեջ են ներդրվում մի շարք կուլտուրաներ, ինչպիսիք են՝ խաշնդեղ (քերակ), ծներեկը, պատիսոնը, բամիան, իսկ ընդեղեններից՝ կանաչ ոլորը, լիմայի լորին, ծներեկային լորին:

Թլավկոնսերվի առաջադրանքով՝ 1938 թվից մինչև 1940 թիվը Հայկական ՍՍՌ-ի ցածրադիր կոնսերվային գոտում փորձարկվում էր ծներեկային լորին:

Վերջին տարիներին Սովետական Միության մեջ բավականաշափ ուշադրություն է դարձվում այդ կուլտուրային, նկատի ունենալով նրա սննդարարությունը և վիտամինով հարուստ լինելը. իր հատկություններով ծներեկային լորին մի փոքր զիջում է միայն կանաչ ոլորին:

Ծներեկային լորին (*Phaseolus vulgaris*) օգտագործվում է չհասունացած պաճերով (6օնի), նրանց տեխնիկական հասունացման ստագիայում, երբ պաճը նորմալ մեծության հասնելով՝ դեռևս մսոտ և նուրբ է մնում: Այս ստագիայում թելիկները, պերգամենտային շերալ գեռ բացակայում են և հատիկներն ունենում են ոչ ավելի քան ավյալ սորտի հասունացած հատիկների  $\frac{1}{4}$ -ի մեծությունը: Այս ժամանակ լորին պարունակում է մոտավորապես  $10\%$  չոր նյութեր,  $27-34\%$  ինվերտային շաքար և  $2,6-30\%$  օսլա:

Դրանից ավելի հասունանալու դեպքում շաքարները պակասում են, օսլայի պարունակությունն ավելանում և լորին կոպտանում է: (Պրոֆեսոր Սաբուրով՝ «Պառուղների և բանջարեղենի կոնսերվացման ընդհանուր հիմունքները»):

Նույնը տեղի է ունենում նաև քաղած լորին պահելու ժամանակ:

Այդ իսկ պատճառով հանձնարարվում է քաղելուց հետո ինչքան հնարավոր է լորին ավելի շուտ ուղարկել գործարան և չպետք է թույլ տալ, որ նա 10 ժամից ավելի մնա հումքային հարթակում:

Վերամշակվող հումքին առաջադրվում են հետեւյալ պահանջները. պաճերը պետք է լինեն միատիսակ, հյութալի և նուրբ, առանց թելերի և պերգամենտի, կորացնելիս հեշտությամբ պետք է կոտրվեն:

Եթե կան թելեր, ապա անհրաժեշտ է պահի ծայրերը ձեռքով պոկել և թելերը հետը հեռացնել:

Թելերի բացակայության դեպքում էլ նույնիսկ հարկավոր է պաճերի ծայրերը պոկել և հեռացնել, որովհետեւ դրանք միշտ կոպիտ են լինում:

Պաճերի երկարությունը 6 սմ-ից պակաս չպետք է լինի: Դրանից ավելի կարճ պաճերը տալիս են մնացորդների բարձր առկու:

Պաճերի գունավորումը համահավասար չափով կանաչ պետք է լինի, առանց անտոցիանի, կամ պետք է լինի գեղին—մոմային:

Հումքը միաժամանակ պետք է ապահովի կոնսերվացիա համեղ և սննդարար հատկությունները, այդ հատկությունները պահելով նաև սառեցրած մթերքի երկարատև պահպանման դեպքում:

Ցանքերի խնամքը մեխանիզմացիայի ենթարկելու նպատակով պահանջում են թփակոր կամ կիսապատատ տեսակները, որոնց պաճերը ցողունի վրա լինեն բարձր դիրքով, շուտ հասունանան և տան համերաշխ բերք:

Լորու գոյություն ունեցող բանջարեղենային տեսակներն իրենց հումքի սրակով բաժանվում են երկու խմբի. իսկական բանջարեղենային սորտեր, որոնք ունեն մսեղ լորիներ՝ առանց թելի և առանց պերգամենտի և որոնք իրենց նուրբ ու քնքուշ հատկությունը պահպանում են ոչ միայն տեխնիկական հասունացման ստադիայում, այլև գերհաստնակալու և բիոլոգիա-

կան հասունությունն անցկացնելու դեպքում (Բրիթթլ վաքս, Զոենտա, Բիբլիս և այլ սորտեր), և կիսաբանջարային սորտեր, որոնց լորիները թելեր և պերգամենտային շերտ չեն ունենում իրենց զարգացման սկզբնական ստադիայում։ Նայած սորտին և մշակման պայմաններին (որտեղ գլխավոր գործոնը խոնավությունն է հանդիսանում), կիսաբանջարային սորտերի մոտ պերգամենտային շերտի և թելերի երկան զալը կամ ուշանում է և պիտանի հումք է ստացվում, կամ թե արագ է ընթանում և ստացվում է կոպիտ, թելավոր և վերամշակության համար անպետք հումք (ոսկեանձրեկ, ոսկելեռ սորտեր)։

Չորային կլիմայի պայմաններում գործարանների հումքային զոնաների համար հանձնարարվում են միայն առաջին խմբի սորտերը. իսկ երկրորդ խմբի սորտերը կարող են թույլատրվել միմիայն ավելի խոնավ կլիմայի պայմաններում, որտեղ վերոնիշյալ սորտերն ուշ են սկսում կոպտանալ և թելերն ավելի ուշ են առաջանում։

Հայկական ՍՍՌ-ի ցածրադիր կոնսերվային զոնայում ամենալավ սորտերը երկան հանելու համար՝ ծներեկային կանաչ լորու փորձարկումը մենք անց ենք կացրել երկան քաղաքի մոտ գտնվող և Այգեալտղաբանջարաբուծական կայանին պատկանող փորձնուկան բազայում։

Կայանի այդ բազայի հողերը պատկանում են փոշե-կավային խմբին, անստրուկտուր են, հորիզոնները թույլ չափով են գիֆերենցված, սակավազոր են, ոռոգելիս սուած է գալիս մինչև 3—5 սմ հաստությամբ կեղև, որի գեմ շարունակ ստիպված են լինում պայքարել շարքամեջերը փիսեցնելով։ Ստորերկրյա ջուրը խորն է գտնվում. բարձր ջերմաստիճանի և 21,6°-ից մինչև 0,4° ամպլիտուդային տատանումների շնորհիվ՝ օդի ազդեցությամբ քայքայվելու և հանքային աղերով հարստանալու պրոցեսներն այստեղ կատարվում են խիստ ուժեղ չափով։ Հողի մեջ ազուր գտնվում է քիչ քանակությամբ։

Խոնավության պակասը լրացվում է ոռոգումներով։ Հիմնական կուլտուրաները՝ պոմիդորը, տարանդը, բաղրջանը վեգետացիոն ժամանակաշրջանում ոռոգվում են 12—18 անգամ։

**Փորձարկման ենթարկվել են լուսու հետևյալ սորտերը՝**

ԱՆՁ ԲԱՑ ԼՈՒՐԴՅԱՆ	Ս Ո Ր Մ Ե Ր Ի Մ Ա Ռ Ա Հ Ա Կ Բ Ը	Փորձարկման տարիները
1	Ասգրոսու անթել . . . . .	1938, 1939
2	Փիրուն մոմային . . . . .	1938, 1939, 1940
3	Բիբակս (իմպորտային) . . . . .	1938, 1939, 1940
4	Զոենտա կամ գիգանտ . . . . .	1938, 1939, 1940
5	Ռակեանձրի . . . . .	1938, 1939, 1940
6	Դափանի տեղական լոբի . . . . .	1938, 1939, 1940
7	Կապուտակլ լիճ . . . . .	1938 — 1940
8	Հենտուկայի հրաշլիք . . . . .	1938 — —
9	Հենդերսոնի նոր . . . . .	1938 — —
10	Նուրբ—կանաչալուն . . . . .	1938 — —
11	Ռակելեռ . . . . .	1938 — —
12	Ցանավա (Կրացական) . . . . .	1938 — —
13	Մոմային—իմպորտային լորի . . . . .	— — 1940
14	Կոնսերվի լորի . . . . .	— — 1940

Ցանքը կատարվել է թրջած և ուռած սերմերով՝ նախապես ուղղված «քեշի» եկած հողում, որը ցրտահերկ էր արված և գարնանային կրկնավարից առաջ պարարտացված էր լավ փառած աղբով՝ մեկ հեկտարին 20 տոննայի հաշվով։ Չոր և խոնավ հողաշերտի սահմանում թմբերի վրա սերմերը ցանվել են երկշարքանի ժամանակով։ Հողը բավականաչափ խոնավ լինելու պատճառով սերմերը ցանվել են ոչ ավելի քան 3 սմ խորությամբ։ Եարքի մեջ ըույսերը նոսրացվում էին միմյանցից 7 սմ հեռավորության վրա։

Առանձին տարիներին հողամասում մշակվող նախորդող կուլտուրաներ են եղել՝ բոստանային կուլտուրաներ, պոմիդորներ և բաղրջանը։ Աշխատանքը կատարվում էր բանջարակոնասերպային կուլտուրաների տեսակափորձի այն մեթոդով, որ ընդունված էր հարավային ոսողելի զոտիների համար։

Սորտային փորձարկումները տվին հետեյալ պատկերը.

Վաղաճառություն.—Այս հատկանիշը որոշվում էր թե մասսայական ծլումից սկսած մինչև տեխնիկական հասունությունը տևող օրերի թվով և թե բերք առաջ դիմամիկայով:

Վեգետացիոն ժամանակաշրջանում ամենավաղահաս սորտեր դուրս եկան փխրուն մոմային սորտը կամ Բըթթվակաքը և Ուկեանձրեր, որոնք հասունացան 40—44 օրում: Դրանցից հետո գալիս են Բիրպիս և Զոենտա սորտերը:

Ուշ հասունացող սորտ դուրս եկավ «Ղափանի տեղական» սորտը: Իսկ Կենտուկայի հրաշալիք և Կապուտակ լիճ սորտերը տվին ամենաշատ ձգձգված ֆենոֆազերը՝ ժամասայական ծլումից մինչև հասունացման սկիզբը եղած ժամանակաշրջանն անցնելով 57—58 օրում:

Հոստարիների, այնպիսի սորտեր, ինչպիսիք են՝ Ուկեանձրեր, Բըթթվակաքը, Անթել Ասգրուն, Բիրպիսը, Զոենտան, Մոմային խմզորտայինը, թե 1938 և թե 1940 թվին իրենց ամենաշատ բերքը տվել են երկրորդ բերքահավաքի ժամանակ: Այդ նույն սորտերը 1939 թ. ամենաբարձր բերքը (պիկա) տվին չորրորդ բերքահավաքի ժամանակ: 1940 թվին Զոենտա սորտը ամենաշատ բերքը տվեց ծրդ բերքահավաքի ժամանակ, զգալի չափով հետև ընկնելով մնացած սորտերից և տալով ծաղկավիճում ու պտղավիճում: Հենց պտղաբերության սկզբին, ամառվարացան չորային եղանակներին և ոսոգման պակասության պայմաններում:

Համեմատաբար ուշ հասունացող սորտ հանդիսացավ «Ղափանի տեղական» սորտը, որը մնացած սորտերի բերքատվության հաշվառմանը մասնակցեց միայն երկրորդ բերքահավաքից սկսած:

Ամենաուշ հասունացող սորտերն են՝ Կենտուկայի հրաշալիք սորտը, որն ամենաբարձր բերքը տալիս է 6-րդ բերքահավաքի ժամանակ և Կապուտակ լիճ սորտը, որն սկսում է պտղաբերել 4-րդ բերքահավաքից հետո, և ամենաբարձր բերքը տալիս է 10-րդ բերքահավաքի ժամանակ:

Դիտելով սորտերի բերքատվությունը պտղակալության

Ժամանակաշրջանի առաջին քառորդում, մենք տեսնում ենք, որ տարրեր սորտերը տարրեր տարիներում տալիս են ընդհանուր բերքի հետեւյալ տոկոսները.

Ա մ ս տ կ ա ր դ ի ւ		Սորտերի բերքատվությունը պաղաքե- րության շրջանի 1-ին քառորդում— հաշվերգ բնադրանուր բերքը $0/0/0$ -ներով		
Ա մ ս տ	կ ա ր դ ի ւ	1938 թ.	1939 թ.	1940 թ.
Ս ո ր տ ե ր ի ւ ա ն ու ն ն ե ր ը	պատաքերուու- յան ժաման- ակացիզանը 1/VII-ից մինչև 12/VIII (43օր)	պատաքերուու- յան ժաման- ակացիզանը 1/VII-ից մինչև 15/VIII (46օր)	պատաքերուու- յան ժաման- ակացիզանը 25/VII մինչև 1/VIII (37օր)	
1	Բ ը լ ի թ թ թ լ վ ա ք ս . . . . .	76%	38,3%	61,6%
2	Ո ս կ ե ա ն ձ ր և . . . . .	59,6%	29,0%	60,2%
3	Ա ս գ ր ո ո ւ Ս տ ր ի ն գ լ ե ս ս . . . . .	70,0%	15,2%	54,5%
4	Զ ո ւ ն ս տ ա ս . . . . .	61,0%	34,5%	20,1%
5	Բ ի ր պ ի ս — ի մ պ ո ր տ ա յ ի ն . . . . .	60,9%	27,5%	42,4%
6	« Ղ ա փ ա ն ի տ ե ղ ա կ ա ն » ս ո ր տ . . . . .	39,4%	7,9%	15,1%
7	Կ ա պ ո ւ տ ա կ լ ի ճ . . . . .	5,43%	—	—
8	Ն ո ւ ր ը — կ ա ն ա չ . . . . .	76,2%	—	—
9	Հ ե ն դ ե ր ս ո ն ի ն ո ր ը . . . . .	72,9%	—	—
10	Ց ա ն ա վ ա (Վ ր ա ց ա կ ա ն ) . . . . .	57,5%	—	—
11	Մ ո մ ա յ ի ն — ի մ պ ո ր տ ա յ ի ն . . . . .	—	—	42,3%
12	Կ ո ն ս ե ր վ ա յ ի ն . . . . .	—	—	36,6%
13	Կ ե ն ա տ ո ւ կ ա յ ի հ ը ա շ ե ք ը . . . . .	2,95%	—	—

Այստեղ համարյա ամբողջովին հաստատվում են ըստ սորտերի կատարված դիտողությունները:

Սորտերի բերքատվությունը.—Տեխնիկապես հասունացած լորիների բերքահավաքը կատարվել է պարբերաբար, յուրաքանչյուր 3—4 օրից հետո:

Բերքահավաքը 1938 թվին կատարված է 12 անգամ, 1939 թվին 15, իսկ 1940 թվին ընդամենը 9 անգամ։ 1940 թվին՝ լուսու բերքատվության ժամանակաշրջանը տևեց ընդամենը 26 օր, մինչդեռ նախորդ տարրում տևել էր 46 օր։ Զորային եղա-

նակներ սկսվելու և ոռողման ջրի պակասության պատճառով հենց հուլիսի առաջին տասնօրյակում սկսեց ուժեղ ծաղկավեժում և պտղաբերությունը կանգ առավ: Այդ իսկ պատճառով 1940 թվին բերքատվությունը խիստ ընկավ և դա բնորոշ չէ սորտերի բացարձակ բերքատվությունը որոշելու համար: Ավելի նպատակահարմար ենք համարում սորտերի բերքատվության մասին վերջնական հետևություն անել նախորդ երկու տարվա տվյալների հիման վրա:

Սակայն սորտերի համեմատական բնութագրման համար մենք հնարավոր ենք համարում օգտագործել 1940 թվի բերքատվության տվյալները: Բայց այդ տվյալների՝ փորձարկվող սորտերը դասավորվում են հետևյալ հերթականությամբ.

### Մեկ հեկտարի բերքը ցենտներով

Ասկեանձը	44,9
Ասգրոռուանթել	28,5
Բրիթթլ վաքս	27,1
Կոնսերվային	27,1
«Ղափանի տեղական»	25,2
Մոմային իմպորտային	25,9
Բիրազիս իմպորտային	24,7
Կապուտակ լիճ	7,1

Վերոհիշյալ տվյալները համեմատելով հենց նույն սորտերի 1938 և 1939 թվերի բերքատվության տվյալների հետ ստացվում է՝ (տես ստորև բերվող աղյուսակի տվյալները ցենտներով):

Անձը	Սորտերի անունները	Բերքը 1938 թվին	Բերքը 1939 թվին	Միջին բերքը երկու տարում
1	Ասկեանձը	93,1	90,9	92,0
2	Ասգրոռուանթել	87,7	76,6	82,1
3	Բիրազիս իմպորտային	85,7	77,1	81,4
4	Բրիթթլ վաքս	66,7	78,4	72,6
5	Զանտա	68,0	77,4	72,7
6	«Ղափանի տեղական»	43,3	73,0	60,1
7	Կապուտակ լիճ	55,8	—	—
8	Կենտուկայի հրաշալիքը	41,1	—	—
9	Նուրբ-կանաչ	61,6	—	—
10	Հենդերսոնի նորը	80,4	—	—
11	Ցանագա (Վրացական)	77,6	—	—
12	Ոսկելեռ	77,6	—	—

Հստ բերքատվության երկամյա տվյալների՝ սորտերն իրար հաջորդում են նետեցալ կարգով. Ոսկեանձրեց—1 հեկտարից՝ 92 ցենտներ, Անթել Ասպրոռուն—82,1 ցենտներ, Խմզորտային Բիրպիւր—81,4 ցենտներ, Բըիթթլ վաքսը և Զոենտան—72,6 և 72,7 ցենտներ, իսկ «Ղափանի տեղական» սորտը—60,1 ցենտներ:

Բիրպիս սորտը, որը նորմալ տարիներում բերքատվության տեսակետից առաջին տեղերից մեկն էր զրավում, 1940 թվի վեց դեկտեմբերին շրջանում խիստ չորային պայմանների և սոսովման մեծ պակասի պատճառով երաշտից շատ ուժեղ չափով տուժեց, տալով մեծ պտղավիժում: Այդ բոլորի հետևանքով բերքատվության տեսակետից նա իր տեղը զիջեց ոչ միայն այնպիսի սորտերին ինչպիսիք են՝ Բըիթթլ վաքսը, Զոենտան, Անթել Ասպրուրն, այլ նաև «Ղափանի տեղական» ուշահաս սորտին:

Միաժամանակ նրա պաճերը համեմատարար ավելի ցածրութակ դուրս եկան քան նախորդ երկու տարիներում ստացվածները և տվին փուչ, մանր ու ծումոված պաճի մեծ տոկոս:

Կայանի բաղայում միայն մի տարիվա ընթացքում փորձարկված սորտերից պետք է մատնանշել կենտուկայի հրաշալիքը, որը լինելով ներմուծված սորտերի մեջ ամենաուշ հասունացողը, իր բերքատվությամբ ևս վերջին տեղը գրավեց: Համի վատ հատկությունները և զգալի քանակությամբ թեւ ու պերգամենտ ունենալու պատճառով՝ այդ սորտը 1938 թվի միամյա փորձարկումից հետո խստանալից:

Նույնպես համի վատ հատկություն ններ ունենալու, թելավոր և կոսպիտ լինելու, ինչպես նաև պերգամենտ ունենալու պատճառով՝ չնայելով բարձր բերքատվությանը՝ փորձարկումից դուրս հանվեցին նաև Ոսկելեռ և Ցանալվա սորտերը:

Հենդեմանի նոր և նույրը-կանաչ սորտերը չնայած բարձր բերքատվությանը և համի լավ հատկություններին փորձարկումից մեխանիկորեն դուրս ըերվեցին սերմ չստացվելու պատճառով:

Եթե 1940 թվի բերքատվության տվյալները համեմատելու լինենք նախորդ երկու տարիների տվյալների հետ, ապա փորձարկվող սորտերի հերթականությունը մնում է նույնը: Իսկ 1940 թվին փորձարկման մեջ մացլած նոր սորտերը՝ Մոմային-խմզորտայինը և կոնսերվայինը իրենց պաճերի որակով բարձր գնահատական չստացան և առանձին հետաքրքրություն չեն ներկայացնում:

Համեմատաբար ցածր բերք է տալիս «Ղափանի տեղական» սորտը: Կապուտակ լին սորտը, որը մեր կողմից փորձարկվեց

1938 թվին և խոստանվեց ցածր պարկի ու ցածր բերքատվության պատճառներով (բերքի հաշվառքին մասնակցեց միայն 6-րդ բերքահավաքից հետո), 1940 թվի փորձարկումը նորից հաստատեց 1938 թվի տվյալները:

Հատ պաճերի մեծության խմբավորելիս—սորտերը տալիս են հետեւյալ պատկերը (տոկոսները հաշվված են 1-կիլոգրամ քաշից):

Սորտերի անունները	6 սմ-ից ողակամ	6—9 սմ	9—12 սմ	12 սմ-ից ավելի
Ասկեանձրե . . . . .	30%	48%	41%	8%
Բրիթթլ վարս . . . . .	3,50%	45%	41,50%	10%
Ջունտա . . . . .	20%	46%	45%	7%
Բիբովիս իմպորտային . . .	5,50%	57,50%	35,50%	1,50%
Ասգրոսու անթել . . . .	30%	44%	43,50%	9,50%
«Ղափանի տեղական» . . .	70%	85%	8%	—
Կենտուկայի հրաշալերը .	—	10%	70%	29%

Ոսկեանձրե սորտի պաճերը, որոնք մանում են 6—9 սմ խմբի մեջ իրենց հիմնական մասսայով ունենում են 9 սմ երկարություն, այնպես որ պաճերի մեծ մասը համաչափ է լինում:

Նույնը պետք է ասել նաև Ջոնտայի մասին:

«Ղափանի տեղական» սորտը, որը պաճերի մեծության տեսակետից իր հիմնական մասսայով մանում է 6—9 սմ երկարություն ունեցողների խմբի մեջ, ավելի մոտենում է 6 սմ-ին:

Թելերի քանակը որոշելու համար 2-րդ և 3-րդ խմբերից վերցված 100 հատ պաճերի երկուական նմուշների միջինը տալիս է հետեւյալ պատկերը.

Սորտերի անունները	Թելավոր լորե-ների թիվը	Անթել և պերգամին չունեցող լորեիների թիվը
Բիբովիս իմպորտային . . . . .	1	99
Ասկեանձրե . . . . .	29	71
Բրիթթլ վարս . . . . .	1	99
Ջոնտա . . . . .	5	95
Անթել Ասգրոսու . . . . .	1	99
«Ղափանի տեղական» . . . . .	4	96
Կապուտակ թիմ . . . . .	61	39
Ռոկելեռ . . . . .	90	10
Ցանավա . . . . .	95	5

ՊԻՐԳԱԾՄԵՆՏԱՅԻՆ ՇԵՐՏԻ ԱՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Մի շարք սորտեր, ինչպիսիք են Բրիթթլ վաքսը, Ջոենտան, Բիրպիոը, Անթել Ասգրոռուն, Հենդերսոնի նորը և Նուրբեկանաչը՝ ամենեն պերգամենտ չեն առաջացնում:

Գերհասունանալու դեպքում որոշ չափով պերգամենտային շերտ են գոյացնում Ոսկեանձրելը, Կենառուկայի հրաշալիքը և Կապուտակ լիճը:

Գույնի միատեսակության, համի, մսոտության, քնքշության, թելի և պերգամենտային շերտի բացակայության հատկանիշների տեսակեալից սորտերը կոնսերվացված վիճակում 5 բալային սիստեմով դեգուստացիոն գնահատման ենթարկելիս ստացվել է հետեւյալ պատկերը.

1. Ջոենտան . . . . .	5 ըալ
2. Բրիթթլ վաքսը . . . . .	5 »
3. Բիրպիս իմպորտայինը . . . . .	4,5 »
4. Անթել Ասգրոռուն . . . . .	4 »
5. Հենդերսոնի նորը . . . . .	5 »
6. Մուգ կանաչը . . . . .	4,5 »
7. Ոսկեանձրելը . . . . .	3,5 »
8. «Ղափանի տեղականը» . . . . .	3,5 »
9. Մոմային իմպորտայինը . . . . .	2 »
10. Կենառուկայի հրաշալիքը . . . . .	3,5 »
11. Կոնսերվայինը . . . . .	3,5 »
12. Կապուտակ լիճը . . . . .	3 »:

Ցանավա և Ոսկելեռ սորտերը դեգուստացիոն գնահատման շենթարկվեցին, որովհետև դեռ 1938 թվից խոտանվել էին կոպիտ և թելավոր լինելու պատճառով:

Ամփոփելով այն ամենը, ինչ ասացինք ծնեբեկային լոբուտեսակափորձի մասին Հայաստանի ցածրադիր զոնայում, այժմ անցնենք փորձարկվող սորտերի համառոտ բնութագրմանը.

Ոսկեանձրելը—(Սկզբանի փորձակայան № 219):

Ստացված է Գոլդեն—Սեմիշար սորտից:

Թփաձեւ է, դետերմինանտային, սեղմ, թույլ ճյուղավորությամբ և սակավ տերեկուությամբ:

Ծիլերը մուգ կանաչ են՝ անտոցիանով, ծաղիկը մանիշակագույն է, միջին չափի. հատիկը սև է, միջին մեծությամբ, գլանաձեւ է, բացարձակ քաշը 230-ից մինչև 350 գրամ է:

Հայաստանի ցածրադիր զոնայի պայմաններում այս սորտը

վաղահաս է, բերքը ստացվում է համերաշխորեն։ Բերքատվության տեսակետից երեք տարի շարունակ առաջին տեղը գրավեց բոլոր ներմուծված սորտերի մեջ, երկու տարվա (1938—1939) միջին բերքը կազմեց 92 ցենտներ։ 1940 թվի չորային պայմաններում, սորտերի խիստ ցածր բերքատվության դեպքում՝ այս սորտը, այնուամենայնիվ, առաջին տեղը գրավեց։ Տեխնիկական հասունության ստագիայում լորիները մոմային են, սաթագեղնագույն։ Տերևները խիստ մշամվում են բակտերիոզով. պաճերը համարյա չեն վնայիում, բավականին միտեսակությամբ համաչափ են լինում։ Իրենց երկարությամբ հիմնականում պատկանում են 9 և 5—12 սմ երկարություն ունեցողների խմբին։

Որակի տեսակետից այս սորտի պաճերը աչքի են ընկնում վաղ երեսն եկող թելիկներով և պերգամենտի զգալի զարգացմամբ այն դեպքում, երբ վրա է հասնում տեխնիկական թեկուգաննշան գերհասունությունը (որը շուտ է մկավում չորային եղանակության առաջականությունը)։

Թեև նրանց արտաքին տեսքը շատ գեղեցիկ է, բայց ըստ համեմության՝ դեպուստացիաներում ստանում են միջին բարձրություն (3,5 բար)։

Չնայած բարձր բերքատվությանը, այս սորտը չի հանձնարարվում կոնսերվի զոնայի համար։

Ոսկելեռ.՝ Ֆրանսիական հին կիսարանջարային սորտ է, որը վաղուց է մշակվում ՍՍՌՄ-ում։

Թուփը դետերմինանտային է, խիստ ճյուղավորված և շատ տերևոտ, թելեակի գետնատարած։ ծիլերը բաց կանաչագույն են, անտոցիանով գունավորված։

Ծաղիկը մանիշակագույն է, միջակ մեծությամբ։ Հատիկները սև են և էլիպսաձև, միջակ մեծությամբ, 1000 հատիկի բացարձակ քաշը 290—350 գրամ է։

Այս սորտն ունի միջին վաղահասություն՝ չայաստանից ածրագդիր զոնայի պայմաններում։

Չնայած վատ բերք չի տալիս (1 հեկտարից 77,6 ցենտներ), բայց նրա մոմանաս պաճերի շուտ կոպտանալու, վաղ ժամանակից սկսած թելիկ և կարծր պերգամենտային շերտ առաջացնելու հետևանքով չայաստանի ցածրագիր զոնայի չորային կլիմայի պայմաններում՝ փորձարկման հենց առաջին խելտարվանից խոտանվեց և նույնիսկ տեխնոլոգիական փորձարկման չենթարկվեց։

Առմային - իմպորտային սորտ (*նկ. 1*). — Նույնը  
կարելի է ասել նաև այս սորտի մասին, որը շուտ կոպտանում է  
և պերգամենտային շերտ առաջացնում նույնիսկ զարդացման  
վաղ ստադիում:

Այս սորտը միանգամայն անպետք է Հայկական ՍՍՌ-ի  
ցածրադիր զոնային զորային պայմաններում:



Նկ. 1.

Բրիթ թթվաքս կամ փուխը մոմային սորտ (Brittle wax)  
ամերիկական ծագում ունի, Ամերիկայի ամենալավ մոմային  
սորտերից մեկն է համարվում (*նկ. 2*):

Այս սորտը թփածեն է, գետերմինանտային է, միջակ տեղաբնուությամբ և թուփը ցվրված է:


Ծիլերը խոշոր են և բաց կանչազգույն, առանց անտոցիանի: Ծաղիկը սպիտակ է, միջակ մեծությամբ: Հատիկը սպիտակ է՝ սպիրի շուրջն ունենալով սև բիծ, որը նման է թոշող ծիծեռնակի սիլուետին: Բացարձակ քաշը 290 – 350 գրամ է:

Հայաստանի ցածրադիր զոնայի պայմաններում վաղաճաս սորտ է, մի փոքր զիջում է միայն Ոսկեանձրկին: Բերքատվությունը լավ է, զիջում է Ոսկեանձրկ, Անթել Ասպրոս և Իմպրոտային Բիբրալիս սորտերին, հավասար է Զոենտա սորտին, 1 հեկտարից տալով 72,6 ցենտներ բերք: Տերեները քիչ չափով են մնալում բակտերիոզից: Պաճերը միջակ չափով են վնասվում բակտերիոզից:

Տեխնիկական հասունության ստագիայում պաճերը բաց գեղնավուն են, մոմային և ունեն գեղեցիկ ու համահավասար գույն, միատեսակ են և մի փոքր կորացած: Երկարությունը մոտավորապես 9-ից մինչև 12 սմ է և մի փոքր ալեկի: Լայնակի կտրվածքում համարյա կլոր են՝ երկարավուն թելանման ուղիղ քթով, շատ մսոտ և քնքուշ են: Պերգամենտը և թելիկները բոլորովին բացակայում են:

Այս լորիները բարձրորակ հումք են տալիս թե կոնսերվացման և թե սառեցման դեպքերում: Օգտագործվում են թե ամբողջական և թե կտրաված վիճակում: Համբ բարձր հատկության, լավ որակի և արտաքին գեղեցիկ տեսքի շնորհիվ բոլոր տարիներում այս սորտը բարձր գնահատական էր ստանում:

Հանձնաբարպատմ է Հայկական ՍՍՌ-ի կոնսերվի զոնայի համար:



Զոենտա կամ գիգանտ. — Անթել կանաչ լրի (Grant stringless), ԱՄՆ-ի բանջարային լորու ամենատարածված սորտերից մեկն է, որն օգտագործվում է զանազան ձևով՝ կոնսերվացման համար: ՍՍԾՄ է բերվել 1932 թվականից:

Բոտանիկական տեսակետից թփաձև է, դետերմինանային, բարձր է, միջակ տերեսությամբ: Ծիլերը խոշոր են, թռւյլ անտոցիանով: Ծաղիկը վարդագույն—բացմանիշակագույն է և ունի միջակ մեծություն: Հատիկը խոշոր է, դեղնագույն, գլանաձև: Բացարձակ քաշը 390—450 գրամ է:

Այս սորտը Հայաստանի ցածրագիր զոնայի պայմաններում ունենում է միջին վաղահասություն: Բերքատվությամբ համարյա հավասարվում է Բրիթթլ վաքս սորտին—72,7 ցենտեր և հեկտարից: Խնձօքս Բրիթթլ վաքսը, այս սորտն ևս զգայուն է ողի չորության նկատմամբ: Բերքատվությամբ քիչ չափով զիջում է Բրիթթլ վաքսին միայն 1940 թվի սեզոնին, եթե ամառը սաստիկ չորային էր. այդ տարում Զոենտա սորտը տուժեց ծաղիկների թափվելուց և բակտերիոզով խիստ վարակվելուց:

Պաճերը բաց կանաչ են, երկար, հավասարաչափ են, երբեմն շատ քիչ չափով կորացած, կարճ և բութ քթով: Երկարությամբ պատկանում են 9—12 սմ երկարություն ունեցողների խմբին: Պաճերը մսոտ են, առանց պերգամենտի թելերի, կոնսերվացած վիճակում ունենում են հրաշալի նուրբ կանաչ գունավորում:

Համով և այլ հատկություններով այս սորտը գերազանցում է մյուս կանաչապատենավոր սորտերին: Հանձնաբարվում է մշակել ցածրագիր զոնայում:

Ասգրոու.—Ասանց թելերի (Asgrow stringless) — Ամերիկական, ներմուծված սորտ է: Հայաստանի ցածրագիր զոնայի պայմաններում վաղահաս սորտերից մեկն է:

Բուսաբանական ձեզ թփային գետերմինանտային է, բարձրահասակ, խիստ տերևնոտ է: Ծիլերը կանաչ են, առանց անտոցիանի և խոշոր են: Ծաղիկը բաց մանիշակագույն է: Հատիկը գլանաձև է, խայտաբղետ, դարչնագույն է և ունի միջակ մեծություն:

Սերմերի բացարձակ քաշը մինչև 400 գրամ է:

Այս սորտը տալիս է համաչափ բերք: Իր բերքատվությամբ

առաջին տեղն է գրավում կանաչապատենավոր սորտերի մեջ—1  
հեկտարից 82,1 տեսաներ:

Պաճերը կանաչ են, երբեմն գծային թույլ անտոցիանա-  
յին պերգամենտացիայով, որը քայքայվում է եփելու ժա-  
մանակ:

Իրենց երկարությամբ պաճերը հիմնականում պատկանում  
են 9—12 սմ, մասամբ էլ 6—9 սմ երկարություն ունեցողներէն  
խմբին, շատ մաստ են, խիտ կազմվածքով, հատվածքի համարյա  
կլոր ձևով՝ առանց պերգամենտի և անտոցիանի: Շատ համեղ են:  
Դեգուստացիայում ստանում են բարձր գնահատական: Այս  
սորտը հանձնարարվում է կոնսերվի զոնայի համար:

Ագրոբիոլոգիական հատկանիշներով և հումուլթի որակի ու  
համի առանձնահատկություններով՝ այս սորտին մոտենում են  
ուրիշ երկու ամերիկական ներմուծված սորտեր ևս՝ Հենդերսոնի  
նորը և Նուրբ-կանաչը, որոնք 1938 թվին փորձարկվեցին ցած-  
րագիր զոնայում, բայց 1938 թվից հետո փորձարկումից դուրս  
հանվեցին սերմերի բացակայության պատճառով:

Բ ի բ պ ի ս.—Իմպորտային սորտը (Burpees stringless green  
pod)—Ամերիկան, ներմուծված սորտ է: Հայաստանի ցածրա-  
դիր զոնայի պայմաններում միջին վաղահասություն ունի:

Ծիլերը խոշոր են, թույլ չափով ներկված անտոցիանով:

Բուսաբանորեն — թփաձե է, դետերմինանտային, միջակ  
տերեկոտությամբ: Գույնը վարդագույն-սպիտակ է, միջին մե-  
ծությամբ: Հատիկը մուգ-գարշնագույն է, խոշոր, երկարավուն-  
էլիպսաձև: Սերմերի բացարձակ կշիռը 380—400 գրամ է: Լավ  
բերք է տալիս—1 հեկտարից 81,1 տեսաներ: Բերքատվությունը  
խիստ ընկնում է չորային տարիներում՝ ծաղկավիժման պատ-  
ճառով: Պաճերը միջին մեծություն ունեն՝ 6-ից մինչև 12 սմ,  
նայած ամառվա պայմաններին: Երաշտի ժամանակ ստացվում  
են կարճլիկ և ծոված պաճեր, որոնք տուժում են (չրէզզերն-  
ուա-ով): Պաճերը պերգամենտ և թելեր չունեն: Համի արժանիք-  
ներով և մսալիությամբ կոնսերվացված վիճակում բարձր գնա-  
հատական են ստանում:

Այս սորտը համեմատաբար դիմացկուն է տերեների բակ-  
տերիոզի նկատմամբ: Պաճերը միջակ չափով են վնասվում: Ցած-  
րագիր զոնայում՝ հանձնարարվում է:

Կենտուկիա հրաշի հրաշալիքը—(Kentucky Wounder).—Ամերիկյան, ներմուծված սորտ է: Ամենաուշ հասունացող սորտերից է՝ Հայկական ՍՍՌ-ի ցածրադիր զոնայի պայմաններում: Ամենաշուտ բերքը տալիս է 6-րդ բերքահավաքի ժամանակ, սորտերի բերքահավաքին մասնակցում է 4-րդ հավաքից սկսած:

Թփի ձեռ՝ կիսապատաստ է:

Իր բերքատվությամբ՝ ներմուծված սորտերի մեջ ամենավերջին տեղն է բռնում—41 ցենտներ 1 հեկտարից: Պաճերը երկար են, պատկանում են 9—12 և 12 սմ-ից ավելի երկարություն ունեցողների խմբին: Պերգամենտային շերտը և թելերը շուտ երևան գալու և համը լավ չլինելու պատճառով, այս սորտի հումքը ցածր որակի է և 1938 թվի փորձարկումից հետո խորանակ է:

Ցածրադիր զոնայի համար չի հանձնարարվում:

Կապուտակ լիճ.—(Blue laec).—Ամերիկյան, ներմուծված սորտ է: Հայաստանի ցածրադիր զոտու պայմաններում ամենառոշ հասունացող սորտն է: Սորտերի բերքահավաքին մասնակցում է 4-րդ հավաքից սկսած: Առավելագույն չափով պաղաքեր է գառնում 10-րդ բերքահավաքի ժամանակի:

Բուսաբանութեն թփի ձեռ՝ կիսապատաստ է:

Բերքատվությամբ նախավերջին տեղն է զրավում—55,7 ցենտներ 1938 թվին, և աննշան բերք է տվել 1940 թվի չորրային պայմաններում (7,1 ցենտներ):

Պաճերը երկար են, պատկանում են 9-ից մինչև 12 սմ երկարություն ունեցողների խմբին:

Դեղուստացիաներին վատ գնահատական է ստանում, որովհետեւ ունի զգալի քանակությամբ թել և պիրգամենտ ու բացի այդ այնքան էլ համեղ չէ:

Այս սորտը չի կարող հանձնարարվել կոնսերվի զոնայի համար:

Կոնսերվային սորտ.—Փորձարկվեց միայն 1940 թվին, իր բերքատվությամբ աչքի չընկալ, իսկ որակով նույնիսկ դիջեց նախապես փորձարկված մյուս սորտերին:

Ցանավա (նկ. 3).—Վրացական սորտ է, Հայաստանի ցածրադիր զոտու պայմաններում ունի միջին վաղահասություն:


Բուսաբանորեն թփածե է, դետերմինանտային: Ծիլերը միջակ մեծություն ունեն, մուգ կանաչ:

Ծաղկը բաց մանիշակագույնի է, հատիկը խայտաբղետ—

մարմնագույն է, վարդագույն նըրերանգով, խոշոր է, ձվածև։ Սերմերի բացարձակ քաշը 320-ից մինչև 400 գրամ է։ Տալիս է լավ՝ բերք—հեկտարից 77,6 տեսաներ։

Պաճերը տափակ են, կանաչ անտոցիանային գծերով գունազարդված (նույնիսկ գերհասունանալու գեպքում)։ Կարճ են, հիմնականում պատկանում են 6-ից մինչև 9 սմ երկարություն ունեցողների խմբին։

Անհամ, կարծր ու կոպիտ մսի և թելառատության պատճառով այս սորտը տեխնիկական վերամշակման չենթարկվեց և 1938 թվականից հետո դուրս հանվեց տեսակափորձարկումից։



Նկ. 3.

«Ղափանի տեղական» սորտ (Գյուլուլ չալ լոբի)։—Հայկական սորտ է։ Հայաստանի ցածրագիր դոնայի պայման-

Ներում միջին և ուշահաս է: Ծիկը մուգ կանաչ են, ունեն միջին մեծություն, ծաղիկները բաց մանխակազույնի են, ցողունը չափազանց երկարում է, պատապուղ է: Պաճերի հիմնական մասսան գտնվում է ցողունի ստորին մասում:

Ճյուղավորությունը քիչ է, տերեսությունը միջակ: Բերքատվությունը միջակ է—1 հեկտարից 60,2 ցենտներ: Սերմերը երփներանդ են, մարմնագույն՝ վարդագույն նաշխով, խոշոր են և ձվաձև: Պաճերը կարճ են, մեծությամբ պատկանում են 6-ից մինչև 9 սմ երկարություն ունեցողների խմբին, ուղիղ են և կանաչ, մեծ մասամբ անտոցիանային գունավորում ունեն, որը երբեմն երեան չի գալիս, իսկ առանձին պաճերի մոտ շատ ցայտուն է արտահայտված և պահպանվում է բիոլոգիական հասունության ստագիայում: Տեխնիկական հասունության ստագիայում՝ թելերը և պերգամենտը բացակայում են:

Պաճերը մասլի չեն, բայց շատ նուրբ են (դալար): Թարմ վիճակում պատրաստելիս հիանալի որակի համեղ կերակուրներ են ստացվում:

Կոնսերվի համար պիտանի չեն՝ երկու կեսի բաժանվելու պատճառով: Հանձնարերելի չէ կոնսերվային արդյունարերության համար: Սեղանի թարմ գործածության և հատիկն օգտագործելու իմաստով հիանալի սորտ է: Նեցուկներ են պահանջում, այդ պատճառով շատ աշխատանք և ավելորդ ծախսեր է պահանջում: Այս սորտը լավ է տնամերձ հողամասերում մշակելու համար:

Այս սորտը լավ ցուցանիշներ է տալիս Հայաստանի թելեռնային և թե նախալեռնային գոտում:

Մեր փորձարկումներից ստացված տվյալներով՝ Գլավկոնսերը վը և Հայկական ՍՍՌ-ի Հողգորկոմատը Հայաստանում կոնսերվի զոնայի համար ռայոնացման են ենթարկել հետեւյալ սորտերը: Բրիթթը վաքսը, Զոկնտան և Անթել Ասգրոսուն, իսկ «Դափանի տեղական» սորտը ռայոնացման է ենթարկվել՝ նրա կանաչ լուրին և չոր հատիկը կերակրի մեջ օգտագործելու համար:

Աղջուակ՝ ԾՆԵԲԵԿԱՅԻՆ ԼՈԲՈՒ ՈՐՈՇ ՍՈՐՏԵՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ա. Շաքարային պաճեր, թփաձև են աճում:

1. Առանց թելերի: Սերմերը միապաղաղ գունավորում ունեն:

0. Սերմերը գեղնագույն են, գլանաձև, պաճերը բաց կա-

Նաչ, երկար և հարթ են, երբեմն միքիչ կորացած, ունենալով  
կարձ և բութ քիթ—Զոենտա կանաչ պատյանով:

00. Սերմերը դարչնագույն, երկարավուն, էլիպսաձև, պա-  
հերը կանաչ, քիթը հաստ, մի փոքր կորացած—Բիբլիսի կանաչ  
պատյանով:

Սերմերը երփներանգ, նախշուն են:

0. Սերմերը սպիտակ, սև բծով՝ թռչող ծիծեռնակի սիլու-  
ետի նման, պաճերը մոմային են:

00. Սերմերը մանիշակագույն դարչնագույն են, խայտա-  
բգետ: Պաները կանաչ՝ Անքի Ասգրոս:

2. Թելա զոր:

Սերմերը միապաղաղ գույնի:

0. Սերմերը սև են, էլիպսաձև մոմային—Ուկելեն:

00. Սերմերը սև են, զլանաձև, պաճերը մոմային—Ուկե-  
տաձրի:

բ. Պաճերը պատենավոր են և կիսաշաքարային: Ցողունը  
պատառվող է: Պաճերը առանց թելի:

Սերմերը համեմատաբար մեծ են, ձվաձև մարմնագույն՝  
վարդագույն բծերով, որոնք երբեմն վերածվում են կարձ և կե-  
տավոր գծերի:

Պաճերը կանաչ են, հաճախ բաց մանիշակագույն ստվերա-  
գծերով, ուղիղ են, որոշ չափով տափակ, հանգուցավոր՝ երկար և  
ծուռ կտուցով—«Ղափանի տեղական» սորտ:

## РЕЗЮМЭ

Для урегулирования графика подачи овощного сырья на консервный завод, достижения равномерной загрузки его в течение сезона—в производство внедряется ряд культур: каковые—ревень, спаржа, патиссоны, бамия, а из бобовых: зеленый горошек, бобы—„лима“, спаржевая фасоль.

По заданию Главконсерва спаржевая фасоль испытывалась в низменной консервной зоне Армянской ССР с 1938 по 1940 г. г.

В последние годы этой культуре в Союзе уделялось достаточное внимание, в виду питательности и витаминозности ее сырья.

Для целей консервирования и замороживания в использование идут недозрелые бобы стадии технической зрелости, когда боб достигая нормальных размеров, остается еще мясистым и нежным.

Волокна и пергаментный слой в этой стадии еще отсутствуют. Зерно еще имеет не более  $\frac{1}{4}$  размера зрелого зерна данного сорта.

Испытание проводилось на опытной базе Плодо-виноградной Селек. Станции (близ. г. Ереван), по методике сортоиспытания овощных консервных культур, принятой для южных полевых зон.

В испытании участвовали следующие 14 сортов.

- |                        |                         |
|------------------------|-------------------------|
| 1. Асгроу без волокна  | 7. Голубое озеро        |
| 2. Хрупкая восковая    | 8. Чудо Кентукки        |
| или Бриттель вакс      | 9. Новая Гендersona     |
| 3. Бирпись импортная   | 10. Нежно-зеленая       |
| 4. Джоента             | 11. Золотая гора        |
| 5. Золотой дождь       | 12. Цанава (Грузинская) |
| 6. «Местная Кафанская» | 13. Восковая импортная  |
|                        | 14. Консервная          |

В результате испытания нами получена подробная характеристика сортов в условиях южной поливной зоны, сроки созревания их, динамика отдачи урожая в течение сезона, общая урожайность, качество сырья, технологическая оценка.

переработанного продукта и выделены наиболее ценные из них для внесения в производство.

По вегетационному периоду наиболее ранними оказались сорта восковые—Бриттль вакс и Золотой дождь—40-44 дня от всходов до начала созревания.

Вслед за ними идут Бирпись, Джоента и другие.

Поздней оказалась „Местная Кафанская“. Сорта же Чудо Кентуки и Голубое озеро дали наиболее растянутые фенофазы, проходя период от массовых всходов до начала созревания за 57—58 дней.

**Урожайность сортов.** По урожайности сорта идут в следующем порядке: Золотой дождь—урожайность на 1га 92 ц.; Асгроу без волокна—82,1 ц.; Бирпись импортная—81,4 ц., Бриттль вакс, Джоента—72,6 цент. и 72,7 центнера, „Местная Кафанская“ 60,1 центнера.

В виду низких вкусовых достоинств и наличия волокон и пергамента из сортоспытания были выключены сорта Чудо Кентуки, Золотая гора, Цанава. За низкое качество бобов был забракован также Голубое озеро.

#### Качество бобов.

По качествам бобов (отсутствие волокон и пергаментного слоя) наилучшими оказались сорта:

Бриттль вакс, Джоента, Бирпись, Асгроу без волокна, Новый Гендерсона, Нежно-зеленая.

При дегустационной оценке сортов в консервированном виде по пятибалльной системе сорта получили общие баллы:

Джоента . . . . .	5
Бриттль вакс . . . . .	5
Бирпись импортная . . . . .	4,5
Асгроу без волокна . . . . .	4
Гендерсона . . . . .	5
Нежно-зеленая . . . . .	4,5
Золотой дождь . . . . .	3,5
Восковая импортная . . . . .	2,0
Чудо Кентуки . . . . .	3,5
Консервная . . . . .	3,5
Голубое озеро . . . . .	3,0

В результате трехлетнего изучения нами выделены для зоны и зарайонированы Главконсервом и Наркомземом Арм-ССР следующие консервные сорта: Бриттль вакс, Джоента, Асгроу без волокна, а из местных Кафанская для свежего столового потребления нежной лопаты, а также сухого зерна.

ՕԴՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Проф. Сабуров: Общая технология плодов и овощей.
2. А. Е. Сенюшкин, А. М. Дрезд: Овощные бобовые культуры в консервной промышленности. Пищепромиздат, Ленинград, 1940 г.
3. Руководство по аппробации сельско-хозяйственных культур, том V, НКЗ СССР В АСХНИЛ ВИР. Сельхозгиз, Москва, 1939 г.

Վ.Ֆ. 3542. Պատվեր 509. Տիրաժ 1000. Տպագրական  $1\frac{1}{2}$  մմմ.  
Հեղին. 1 մմմ. Մեկ մամուլում 39520 նշան. Ստորագրված  
է տպագրության համար 12/VIII—42 թ.

---

Հայպետհրատի տպարան, Երևան, Խենիսի 65

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0008239

Գրքը 1 ռ. 50 կ.

A 18929

Проз.

Ա. Ա. ԱՆԱНՅԻ  
Спаржевая фасоль  
■ консервной зоны  
Армянской ССР  
(на армянском языке)  
Армгиз 1942 Ереван